Կից 318561 թերով

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» N 416 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան « 27 » « 12 » 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ «Պատվիրատու»), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վ. Դևրիկյանի (այսուհետ՝ «Կատարող»), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով 01.10.2019 թ. կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N 416 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 10.2-րդ կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 6.1-ին կետում «2019 թվականի դեկտեմբերի 20-ն» և «2020 թվականի հունվարի 31-ը» բառերը համապատասխանաբար փոխարինել «2020 թվականի մայիսի 5-ն» և «2020 թվականի հունիսի 15-ը» բառերով.

1.1.2 Պայմանագրի 9.1-ին կետում «2020 թվականի փետրվարի 25-ը» բառերը փոխարինել «2020 թվականի հունիսի 30» բառերով.

1.2. Կատարողը պարտավոր է սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2020 թվականի հունվարի 31-ը պետական բյուջեի N 900005028106 հաշվին վճարել Պայմանագրի 5.4-րդ ենթակետով նախատեսված տույժը՝ հաշվարկված 2019 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ
Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Գ. Լուսավորիչի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011028710	Հ/Հ 900018005364
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02505623
	Հեռ.՝ 077 44 11 58, 93 50 70 86
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Վ. Դևրիկյան
Կ.Տ.	Կ.Տ.